ԴՐԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ԱՐԴԻ ԿԵՆՑԱՂՈՒՄ

Արմենուհի Ստեփանյան

Պատմական գիտությունների թեկնածու

Դրացիություն-հարեւանություն հասկացությունը, ըստ ազգագրության մեջ ընդունված դասակարգման, ժողովրդի հասարակական կենցաղի կարեւոր բաղկացուցիչներից մեկն է[1] : Հասարակական կենցաղն ունի սոցիալական կառուցվածք եւ որոշակի գործառույթներ, որոնցով վերահսկվում եւ կանոնավորվում է հասարակության սոցիալ-տնտեսական եւ ծիսական կյանքը՝ համայնական, ազգակցական-ընտանեկան եւ դրացիական փոխհարաբերություններում: Ժամանակի ընթացքում հայոց մեջ ձեւավորվել ու կանոնավորվել են դրացիական փոխհարաբերություններ՝ ավանդական-նահապետական համայնքի պահանջներին համապատասխան, որոնք, պահպանվելով մինչեւ 19-րդ դարի սկիզբը, առանձին դրսեւորումներով ու փոփոխություններով հասել են մինչեւ մեր օրերը: Հայոց մեջ ազգակցական կապերը, տեղային բնակեցման դեպքում, սերտորեն միահյուսվում են դրացիությանը[2]: Հայաստանում ամենուր, հատկապես գյուղական բնակավայրերում, մինչեւ 20-րդ դարի սկիզբը գոյություն են ունեցել ազգակցական թաղեր, որտեղ, ըստ հայոց սովորութական օրենքի, բնակվել են միայն արյունակցական (տղամարդու գծով) ազգակցական կապ ունեցողները, ովքեր եւ կարող էին հանդիսանալ դրացիներ: Այդ ազգակցական թաղերում դրկից հարեւանների տների պատերը կից էին, հաճախ՝ ընդհանուր երկու տան համար: Այդպիսի տների պատերի մեջ կային բացվածք-պատուհաններ (դրիջակ,պտրհան)՝ հաղորդակցության եւ առօրյա կենցաղային «տալ ու առնելու»՝ փոխանակության համար: Ավելի մեծ չափերի բացվածքներ էին արվում տան ծածուկ հատվածներում, տնտեսական մասերում, ինչպես, օրինակ՝ գոմը, մառանը եւ այլն, որոնցով մեծահասակ մարդ կարող էր փորսող անցնել[3]: Այդ բաց-

---

[1] Հասարակական կենցաղի մյուս բաղկացուցիչներն են համայնքը, ազգատոհմը: Հասարակական կենցաղն իր հերթին ժողովրդի կենսագործունեության մի կարեւոր բնագավառ է, որը եւ հանդիսանում է ազգագրության ուսումնասիրության հիմնական առարկան:

[2] Տարածքային մերձակայության վրա հիմնված անմիջական հարեւանությամբ ապրողները դրկից հարեւաններն են: Տարբերվում են նաեւ թաղակից (կից թաղերում ապրող), հողակից (որոնց հատկացված վարելահողերը, այգիները, բանջարանոցները կից են), հարեւաններ:

[3] Այդպիսի բացվածքներով տնետուն անցնելով կարող էին ծածուկ ձեւով գյուղից դուրս բերել պետությունից հետապնդվող մեկին: Արեւմտյան Հայաստանում 20-րդ դարի սկզբին այդ կերպ փախուստի ճանապարհ էին ապահովում հետապնդվող ֆիդայիների համար:

վածքների միջոցով կարող էին ընդհանուր վտանգի դեպքում միմյանց լուր տալ, անցնել տնից տուն կամ գյուղն արագ ոտքի հանել ինքնապաշտպանության համար, միմյանց շտապ օգնության հասնել եւ այլն: Այդ բացվածք-անցումները, տեսանելի թե ծածուկ, սովորաբար ծածկում էին մի փոքր կարպետով կամ մորթու պատառիկով: Թեպետ եւ այդ անցքերի առկայության պատճառով լսելի էր հարեւանի տան անցուդարձը, վեճ-կռիվը, սակայն գոյություն ունեցող բարոյական կոդեքսը թույլ չէր տալիս, եւ ամոթ էր համարվում ականջ դնել ու նաեւ մյուս հարեւանների հետ քննարկել լսածը: Հարեւանի տան վեճ ու կռվին միջամտելը նույնպես չէր խրախուսվում, եթե ինքը՝ դրկիցը օգնության չէր կանչում:

Վերադառնալով պատերի մեջ բացված դրիջակներին, կարեւոր է նշել, որ անշուշտ դրանք առիթ չէին տա գողության: Փոխադարձ վստահությունը դրկից հարեւանների միջեւ այնքան խորն էր եւ արմատացած, որ հայ մարդու մտքով իսկ չէր անցնի այդ ճանապարհով ներս սողոսկել ու վնասել հարեւանին, միեւնույն ժամանակ, անվանարկելով իրեն ու սրբազանցություն թույլ տալ: Նման եզակի դեպքերում համայնքի ժողովն իրավասու էր տվյալ մարդուն վտարել համայնքից՝ զերծ պահելով նրան օրենքի (պետության) առջեւ պատասխանատու լինելուց: Փոխադարձ վստահության ապացույց է նաեւ այն, որ մինչեւ մեր օրերը գյուղերում տան դռները կողպելով՝ հաճախ բանալին կախում էին պատից: Տան դուռը փակում են ոչ թե հարեւանից երկյուղելով, այլ որպեսզի որեւէ թռչուն կամ կենդանի (հավ, շուն եւ այլն) ներս չմտնի: Այս առումով ուշագրավ է մեր օրերում քաղաքներում եւս տարածված մի սովորույթ, երբ տան բանալին անհրաժեշտության դեպքում վստահում են հարեւանին: Անշուշտ, վիճարկելի չէ այն փաստը, որ նա, ում վստահել են տան բանալին, երբեք չի օգտվի դրանից չարամետ նպատակով: Կարեւոր է նաեւ այն, որ տանը որեւէ բան կորելու դեպքում էլ, տանտերը չի կասկածի հարեւանին: Սա հարեւանների միջեւ փոխադարձ վստահության վառ ապացույցներից է, որ ավանդական կենցաղից պահպանվել եւ գործում է մեր օրերում:

Դրացիական հարաբերություններում ոչ պակաս կարեւորություն ունի փոխօգնությունը: Ընդ որում, սա այն գործառույթն է, որ առկա է եւ մեր օրերում: Ավանդական կենցաղում փոխօգնությունն առկա էր տնտեսավարման բոլոր ձեւերում՝ համատեղ ցանքսի, բերքահավաքի ժամանակ: Եթե նշված գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ հարեւան տղամարդկանց փոխօգնությունն էր կարեւոր, ապա առտնին տնտեսության մեջ՝ կանանց դերը: Այնպիսի տնտեսական աշխատանքներ, ինչպես բուրդ լվանալը, գզելը, էրիշտա կտրելը, կաթնամթերքի մշակումը՝ աշխատատար էին, եւ լրացուցիչ օգնության կարիք էր լինում, ինչին եւ պատրաստվում-մասնակցում էին հարեւանները:

Էրիշտա կտրելը չամուսնացած աղջիկների գործն է, որը վերածվում է գրեթե տոնական արարողության: Այն տանը, որտեղ դա պետք է տեղի ունենար,

աղջիկները հավաքվում էին վաղ առավոտից, տանտիրուհին հյուրասիրում էր նրանց: Մինչ աղջիկները երգ ու զրույցով անցնում էին գործի, գյուղի երիտասարդ տղաները երդիկից թաշկինակ-տոպրակներով միրգ ու քաղցրեղեն էին իջեցնում, ձայն տալով իրենց հավանած աղջիկներին: Ի պատասխան այդ անակնկալ նվերների՝ աղջիկները հանպատրաստի հորինվածքով երգեր էին երգում՝ ուղղված իրենց երկրպագու տղաներին. օրինակ՝

Էսօր նորել է նորը,
Այ երդիկ կայնող տղա,
Կարմիր է մայրամիդ (թաշկինակ) խնձորը,
Տուն գնա, թե չէ թոն (անձրեւ) կուգա[4]:

կամ՝

Հերիք եղավ շան տղեք,
Թողեք էրդիկն իջեք ցած,
Շներն էլ են քուն մտե
Ինչ եք էդտեղ վեր ընկե[5]:

Այս դեպքերը մեր ավանդական կենցաղում առիթ էին այն բանի, որ աղջիկ-տղա իրար տեսնեն, հավանեն:

Դրացիական փոխօգնության մյուս տարածված ձեւը տան շինարարությունն ու վերանորոգումն էր: Հարկ է նշել, որ հարեւաններն իրարից դրամական հատուցում չէին ակնկալում, քանի որ դա փոխադարձ էր: Քաղաքներում եւս ընդունված է հարեւանին օգնության կանչել վերանորոգման որոշ աշխատանքների դեպքում, որի դեպքում նույնպես դրամական հատուցումը հազիվ թե կիրառելի է (ըստ աշխատանքի ծավալի եւ հարեւանի պրոֆեսիոնալիզմի): Սովորաբար, նման դեպքերում ընդունված է ասել. «Բա ամոթ չի, հարեւան ենք, էսօր ես, վաղը դու», եւ նման այլ արտահայտություններ: Փոխօգնության ձեւերից է եւ տոնածիսական կյանքում ունեցած մասնակցությունը, ինչպես՝ հարսանիք, ծնունդ, կնունք եւ այլն: Ավանդական կենցաղում հարսանիքին մասնակցում էր ողջ համայնքը՝ մթերքով, հացաթխմանը եւ մյուս ուտելեղենի պատրաստմանը մասնակցելով եւ այլն: Ներկայումս նույնպես գյուղերում մարդաշատ են հարսանիքները, եւ յուրաքանչյուրն իր մասնակցությունն է բերում ողջ ընթացքում: Քաղաքներում ներկայիս բարքերում տեղի ունեցած փոփոխությունների (ռեստորաններիի, հարսանեկան եւ հացկերույթների սրահների) հետեւանքով մասնակիցները հատուկ հրավիրյալներ են՝ արժեքավոր նվերների փքուն մատուցմամբ: Ներկա-

[4] Գ. Հակոբյան, *Ներքին Բասենի ազգագրությունը եւ բանահյուսությունը*, Երեւան, 1974, էջ 213
[5] Նույն տեղում:

յումս ծննդյան[6] եւ մկրտության արարողակարգը համարյա հավասարվել է հարսանեկանին եւ գրեթե նույնքան ծախսատար է թանկարժեք նվերների մատուցմամբ:

Դրացիական փոխօգնության համակարգում առավել կարեւոր է հարեւանի միջամտությունը աղետի (ջրհեղեղ, հրդեհ, թշնամու հարձակում եւ այլն), դժբախտության դեպքում: Նման դեպքերում հարեւանը օգնության է հասնում առաջինը՝ մոռանալով նույնիսկ խռովությունն ու գժտությունը: Ահա այս դեպքերի համար է ասվում. «Դրացին արեւեն առաջ դուս կու գա» կամ «Լավ հարեւանը հեռու ազգականից լավ ա», եւ այլն:

Առավել էական է դրացի-հարեւանի օգնությունը մահվան դեպքերում: Ավանդական կենցաղում դրացիական հարաբերությունները թույլ չէին տալիս մարդուն մենակ մնալ դժբախտությանը դեմ դիմաց: Պարտադիր սգո յոթ օրվա ընթացքում հարեւաններն էին հոգում սգավոր ընտանիքի կենցաղային կարիքները, քանի որ նշված օրերի ընթացքում այդ տանը կրակ չէր վառվում, կերակուր չէր պատրաստվում: Սգո սեղանի՝ հոգեհացի եւ ընդհանրապես հուղարկավորման հետ կապված բոլոր ծախսերը, մանավանդ եթե ընտանիքը կարիքավոր էր, հոգում էին հարեւան-ազգականները: Արդի քաղաքային կենցաղում մոռացվել են հին, բարի ավանդույթները: Համատեղ ծախսով պատրաստվող սգո հացկերույթի սեղանը փոխարինվել է թանկ հացկերույթով: Սգո արարողության հետ կապված մնացած ծախսերը մարդուն մոռացնել են տալիս նույնիսկ սուգը:

Առհասարակ, մենք՝ հայերս, հարեւանասեր[7] ենք եւ ձգտում ենք խաղաղ գոյակցության: Բայց նույնիսկ այս պարագայում վեճն ու կռիվը հարեւանների մեջ անխուսափելի են: Կարծում եմ, որ էական է նշել այն պարագան, որ տղամարդիկ հազվադեպ են վիճում եւ կարող են երկար ժամանակ գժտված մնալ: Հաշտվելու առիթ եւ միջնորդի միջամտություն է պահանջվում: Կանայք ավելի հաճախ են վիճում եւ շուտ էլ հաշտվում են: Նույնիսկ գժտված լինելու պարագայում նրանք կարող են հոգ տանել միմյանց երեխաների նկատմամբ, քանի որ դրացիական պարտականությունները վեր են ամեն ինչից:

Դրացիական հարաբերություններում ոչ նվազ դերակատարում ունի համատեղ ժամանցը: Տղամարդկանց տարբեր տարիքային խմբերում ազատ ժամանակն անցկացվում է նարդու, շախմատի տախտակի շուրջ կամ թղթախաղով:

---

[6] Նկատի ունենք ամեն տարի նշվող ծննդյան օրերը: Քանի որ ավանդական կենցաղում չէին նշում ծննդյան օրը: Մարդու ծնվելու օրն էր (հատկապես տղայի) կարեւորվում եւ տոնականացվում, այն էլ ամեն տարի զուտ ընտանեկան միջավայրում՝ «աչքալուսանք» արարողության սահմաններում, որին մասնակցում էին հիմնականում ընտանիքի տղամարդիկ:

[7] Այս միտքն են հաստատում ժողովրդի մեջ տարածված հետեւյալ առակ-ասացվածքները. «Առաջ դրացուդ ուզե, որ Աստված ալ քեզի տա», «Դրացուդ էրկուս պիտի կամենաս, որ Աստված ալ քեզի մեկը տա», եւ այլն:

Կանայք ժամանակն անցկացնում են խոսք ու զրույց քննարկումներով, ուշադրությունից բաց չթողնելով շենքի մուտքերի ելումուտը, քննարկելով նորեկ հարեւանին եւ այլն: Ավանդական կենցաղում տղամարդիկ զբաղված էին լինում ողջ տնտեսական տարվա ընթացքում, եւ միայն ձմռան երկար գիշերներն էին կարճում խոսք ու զրույցով, թափառաշրջիկ գուսանի երգերն ունկնդրելով, հեքիաթ լսելով կամ անվանի գյուղացիների ու գյուղի անցյալի մասին պատմողներին լսելով: Այդպիսի ժամանցի համար էին Ջավախքի գոմի օդաները (գոմին կից ցածր պատով անջատված, բուխարիով փայտաշեն կառույց): Կանանց կենցաղը ամառ թե ձմեռ հագեցված էր աշխատանքային զանազան պարտականություններով: Ազատ ժամանակ գտնելու դեպքում էլ նրանց ձեռքից անպակաս էին իլիկն ու շյուղերը:

Արդի քաղաքային կենցաղում տարբեր են ժամանցի պայմանները քաղաքի կենտրոնի եւ ծայրամասային թաղամասերում: Ուրբանիզացիոն գործընթացները ասես թեթեւակի են անցել քաղաքի արվարձանների, հատկապես մենատներով թաղամասերի վրայով: Ի տարբերություն քաղաքի կենտրոնի, հարեւանական շփումներն իրենց տարբեր արտահայտություններով պահպանել են ավանդականի չափանիշերը ծայրամասերում: Նույնը չի կարելի ասել քաղաքի (նկատի ունենք Երեւանը) կենտրոնի մասին, որտեղ նույն շքամուտքում ապրող հարեւաններն իրար գրեթե չեն էլ ճանաչում: Շատ կենտրոնաբնակներ քաղքենիական մտածելակերպ ունեն: Նրանք արվարձանային թաղամասերի բնակիչներին իբր թե հումորով անվանում են «գեղացի», նկատի ունենալով այն պարագան, որ հարեւանն այնտեղ առանց հրավերքի կամ նախնական համաձայնության ցանկացած պահի կարող է այցելել հարեւանին: Մեր օրերում քաղաքային բարքերն աստիճանաբար թափանցում են նաեւ գյուղական միջավայր, սակայն միեւնույն է, դրանցից շատերը, այդ թվում՝ դրացիական շփումները, որոշ տեղերում դեռեւս պահպանվում են գրեթե անխաթար, քանի որ գյուղական բնակչությունն է ավանդականի կրողն ու պահպանողը: Այդ է վկայում մեր ժողովրդի մեջ տարածված ժողովրդական իմաստությունն արտահայտող այն միտքը թե «Հարեւան չսիրողը իրան չի սիրե (այլ տարբերակում՝ մարդ չի)»:

Մատենագիտություն

Սամվելյան Ի., *Հին Հայաստանի կուլտուրան*, հ. 3. Եր., 1941
Լիսիցյան Ստ., *Զանգեզուրի հայերը*, Եր., 1969
Հայ ազգագրական եւ բանասիրական նյութեր եւ ուսումնասիրություններ, 12, Եր. 1981

Л.Варданян *Традиция мужских возрастных групп у армян в конце XIX – в начале XX в.в.* Հայ ազգագրություն և բանահյուսություն: Պրակ 12 1981.
Акопян М., Сельская община в Восточной Армении во второй половине XIX – в начале XX в.в., Ер., 1998
Карапетян Э., Кровно-родственная группа ,,азг,, у армян, Եր., 1966.
Варданян Л., «Հասարակական կենցաղ – գիտելիք եւ խորհրդանիշ, հավատալիք եւ սովորույթ», ՀՀ Մշակույթի նախարարության միջազգային չորրորդ գիտաժողովի հոդվածների ժողովածու, Երեւան 2009, էջ 173

Ամփոփում

NEIGHBOURSHIP IN TRADITHIONAL AND MODERN LIFE OF ARMENIA

Armenuhi Stepanyan
PhD in History

The neighbourship is a very important component of the public life of the Armenians. Neighbourship is a formation for years and is a regulate system of reciprocal relations between men and families, living side by side. The neighbourship is preserved up today and is still going on. To help each other in different situations (happinesess or sadness) of life is characteristic to a neighbour in old times as well as in our days. That is why the Armenians say. “The nearist neighbor is better, than the distant relative”.

СОСЕДСТВО В ТРАДИЦИОНАЛЬНОЙ И НАСТОЯЩЕЙ ЖИСЗНИ АРМЕНИИ

Арменуи Степанян
Кандидат исторических наук

Соседство является очень важным компонентом в общественной жизни армян. Соседские отношения формируется годами и регулируют взоимоотношения между людьми и семями, которые живут бок о бок. Традиционная система соседства сохранилась вплоть до наших дней и актуален сегодня. Помогать друг другу в разных ситуациях жизни (в беде да в счастье) самая характерная черта соседа как в давних временах так и в наших дней. Вот почему армянин говорит: «Близкий сосед лучше дальнего родственника».